

## **ՀՀ ֆինանսների նախարարություն**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/8**

**14 օգոստոսի 2014 թ.**

Քննարկվեց քաղաքացի Նարեկ Թորոսյանի 31.07.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

#### **Քաղաքացի Նարեկ Թորոսյանի գանգատում բերված փաստարկները.**

Նարեկ Թորոսյանը տեղեկացնում է այն մասին, որ 2013 թ-ի փետրվարին գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր, սակայն ոչ մի գործունեություն չի ծավալել, ՀԴՄ չի ունեցել, գործունեությունը սկսելու դիմում չի ներկայացրել:

2013 թ-ի հուլիսին հարկային աշխատակցի պահանջով վճարել է 26.000 դրամ:

2014 թ-ի մարտին հանձնել է անհատ ձեռներեցի վկայականը և դադարեցրել է գործունեությունը (լուծարվել է): Սակայն, 2014 թ-ի ապրիլին Արաբկիրի հարկային տեսչությունը պահանջել է ներկայացնել տարեկան հաշվետվություն և վճարել 50.000 դրամ (կրկին չաշխատած ԱԶ-ի ամսական 5.000-ները, նաև ավելացրած տույժ ու տուգանքները):

Նարեկ Թորոսյանը ներկայացրել է ու վճարել: Այնուհետև, հարկային տեսչությունից ծանուցում է ուղարկվել 5.000 դրամ հարկային պարտավորություն ունենալու վերաբերյալ: Արդյունքում ստացվում է, որ ԱԶ բացելու, մեկ տարի չաշխատելու և այն լուծարելու համար Նարեկ Թորոսյանը բյուջեին պետք է վճարի 81.000 դրամ հարկ:

Նարեկ Թորոսյանը համոզված է, որ ոչ ոք չաշխատելու համար հարկեր, տույժ ու տուգանքներ չի վճարում, և գտնում է, որ հարկային տեսչության աշխատակիցը ճիշտ չի վարվել իր նկատմամբ: Արդյունքում անտեղի գումար է գանձել, որը ենթակա է վերահաշվարկման և վերադարձման:

Ելնելով վերոգրյալից՝ Նարեկ Թորոսյանը խնդրում է նշված փաստերը հաշվի առնել հետագա որոշումներ կայացնելու ժամանակ:

#### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Նարեկ Թորոսյանը /ՀՎՀՀ 20118973/ ՀՀ պետական ռեգիստրում որպես անհատ ձեռնարկատեր գրանցվել է 04.02.2013 թ-ին: Այնուհետև, 23.04.2014 թ-ին Արաբկիրի ՀՏ է ներկայացրել 2013 թ-ի տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ, որի համաձայն 2013 թ-ի համար հաշվարկված եկամտային հարկը կազմել է 55.000 դրամ:

Տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ ներկայացվել է նաև 2014 թ-ի համար, որի համաձայն 2014 թ-ի համար հաշվարկված եկամտային հարկը կազմել է 15.000 դրամ:

Հարկ է նշել նաև, որ Ա/Ձ Նարեկ Թորոսյանի կողմից հարկային տեսչություն չի ներկայացվել հայտարարություն գործունեություն չիրականացնելու վերաբերյալ:

Ա/Ձ Նարեկ Թորոսյանը դադարեցրել է գործունեությունը (լուծարվել է) 25.03.2014 թ-ին:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Նարեկ Թորոսյանը կատարել է վերը հիշատակված տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկներով իր կողմից հայտարարված եկամտային հարկի գումարները, սակայն 2013 թ-ի և 2014 թ-ի եկամտային հարկի կանխավճարային գումարները Ա/Ձ Նարեկ Թորոսյանի կողմից վճարվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետի խախտմամբ: Արդյունքում, Արաբկիրի ՀՏ կողմից հաշվարկվել են տույժեր՝ գումարով 5007 դրամ:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող և (կամ) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված և (կամ) «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով հարկ վճարողները եկամտային հարկը հաշվարկում և վճարում են ամսական 5 հազար դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ), որը նրանց համար համարվում է եկամտային հարկի գծով վերջնական հարկային պարտավորություն:

Քննարկվող դեպքում Նարեկ Թորոսյանի կողմից վերոգրյալ իրավանորմով սահմանված եկամտային հարկի ամսական 5 հազարական դրամները վճարվել են սահմանված ժամկետի խախտմամբ, որի համար Արաբկիրի ՀՏ կողմից հաշվարկվել են տույժեր՝ գումարով 5007 դրամ, որը Նարեկ Թորոսյանի կողմից ենթակա է վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝**

Ա/Ձ Նարեկ Թորոսյանի 31.07.2014 թ-ի դիմումով բերված գանգատը մերժել:  
Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

**Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝**



**Ռ. ՄԱՍԿԱՂՅԱՆ**